ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » փետրվարի 2026 թվականի N 45-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2023թ. թիվ 2/-14 դրական եզրակացությունը, ինչպես նաև հիմք ընդունելով՝ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման-նախագծման առաջադրանքը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 13.01.2023թ. թիվ 5-Լ և «Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը Hաստատելու մասին» 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումները, «Լոռու մարզի Լոռի-8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին» ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. թիվ 259-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը՝

**որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-063-0111-0008 կադաստրային ծածկագրով 0.95925 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական

նշանակությունը փոխադրել՝ ջրային նպատակային նշանակության, լճեր գործառնական նշանակության նշանակության:

2. Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 15.01.2026թ. թիվ 6-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2026թ.փետրվարի 04
գ.Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. Loriberdhamaynq2017@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«05» փետրվարի 2026թ. № 46-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.10.2025Թ. ԹԻՎ 223-Ա ԵՎ 30.10.2025Թ. ԹԻՎ 224-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 30.10.2025թ.-ի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-044-0207-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.75 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 223-Ա և 30.10.2025թ.-ի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-044-0207-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.75001 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 224-Ա որոշումները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2026թ. փետրվարի 05**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«06» փետրվարի 2026թ. № 47-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-105-0006-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, հիմք ընդունելով Վարդան Գևորգի Զաքարյանի լիազոր անձ Աշոտ Վարդանեսի Ղազարյանի կողմից ներկայացրած դիմումը (անձնագիր՝ AS0546964, տրված՝ 018-ի կողմից), 22.01.2026թ.-ին տրված 05.05.1991թ.-ի Լոռու մարզի Ուռուտ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 4 որոշման թիվ 1 քաղվածքը, 18.02.2025թ.-ին «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը և տեղագրական հատակագիծը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 06-105-0006-0018 ծածկագրում գտնվող 0.09706 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 06-105-0006-0018 ծածկագրով հողամասի մակերեսը 0.09706 հա;

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.09706 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0,08 հա օրինական մասը որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Վարդան Գևորգի Զաքարյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի ավել օգտագործվող 0.01706 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Վարդան Գևորգի Զաքարյանին և օրենքի ուժով ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ըստ «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության ՀՀ Լոռու մարզի Ուռուտ բնակավայրի 06-105-0006-0018 կադաստրային ծածկագրով հողամասում կադաստրային քարտեզում առկա շինությունը գտնվում է կիսաքանդ վիճակում, որը պետական գրանցման ենթակա չէ:

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 06-105-0006-0018 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.09706 հա մակերեսով հողամասի նկատմամբ, համաձայն հավելվածի, ճանաչել Վարդան Գևորգի Զաքարյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

կատ. Մ. Չոբանյան
հեռ. 099256813
**2026թ. փետրվարի 06**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2026թ. № 48-Ա

## ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂ ՅԱՂԴԱՆ 06-079-0010-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, հիմք ընդունելով Ալեքսանդր Իրակլիի Գարգալաջևի լիազորված անձ Արսեն Ֆրունզիկի Հարությունյանի կողմից ներկայացված դիմումը, 12.08.2025թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.02.1991 թվականի թիվ 1 որոշումից թիվ 39 քաղվածքը, 29.01.2026թ. թիվ 403 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0010-0007 կադաստրային ծածկագրում գտնվող 0.18863 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0010-0007 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 0.18863 հա

   բ/ Հաստատել հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.18863 հա օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք,

անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Ալեքսանդր Իրակլիի Գարգալաջևին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0010-0007 կադաստրային ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 17.94 քմ մակերեսով կիսանկուղի, 6.96 քմ մակերեսով կիսանկուղի, 32.67 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի, 2.28 քմ մակերեսով բնակելի տան աստիճանավանդակի, 108.65 քմ մակերեսով բնակելի տան, 8.82 քմ մակերեսով բնակելի տան, 30.12 քմ մակերեսով հացատան, 57.51 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Ալեքսանդր Իրակլիի Գարգալաջևի սեփականության իրավունքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

կատ. Մ. Չոբանյան
հեռ.099256813
**2026թ. փետրվարի 09**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2026թ. № 49-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի 06-101-0031-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Սվերդլով, 6-րդ փողոց, թիվ 5 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2026թ. փետրվարի 09
գ. Լոռի Բերդ